ՀՀ ՏԱՐԲԵՐ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ, ԾԱՎԱԼԱԹԵՐԹ/ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԵՐԻ ԵՎ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՏՋՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4-2

ք. Երևան «21» 03 2025թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սեյսմշին» ՍՊԸ և «Շին նախագիծ» ՍՊԸ կոնսորցիումն, ի դեմս «Սեյսմշին» ՍՊԸ-ի տնօրեն Նորիկ Բունիաթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, և «Շին նախագիծ» ՍՊԸ-ի տնօրեն Փառանձեմ Սուքիասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «**ՀՀ տարբեր մարզերում մի շարք դպրոցների վերանորոգման համար շենքերի չափագրման, ծավալաթերթ/թերությունների ակտերի և նախահաշիվների փաստաթղթերի մշակման**» խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն գինը կազմում է *108 000 000 (մեկ հարյուր ութ միլիոն)* ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի **30-ը:**

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը

կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի

միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Քանի որ պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ

նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 Մեկ քմ-ի բերված արժեքի 25%-ը նախատեսվում է շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացության ձեռքբերման համար: Այդ գումարը կվճարվի Խորհրդատուին այն դպրոցների համար, որոնց վերաբերյալ Պատվիրատուի առաջադրանքով կնախատեսվի շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն՝ I-ին և II-րդ փուլերի աշխատանքների ավարտից և Պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո: Այն դեպքերում, երբ I-ին փուլի եզրակացության հիման վրա տվյալ դպրոցի հետագա աշխատանքները պատվիրատուի կողմից կդադարեցվեն, Խորհրդատուին կվճարվի միայն տեխնիկական վիճակի ուսումնասիրման համար նախատեսված գումարը՝ տվյալ դպրոցի առաջադրանքով նախատեսված գումարի 25%-ը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	**«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ**	**«ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ**
	(գործընկեր 1)	(գործընկեր 2)
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ք. Երևան, Գարեգին Նժդեհ 46	Հասցեն՝ ք. Երևան Գարեգին Նժդեհ 46
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ 04227903	ՀՎՀՀ 04225682
	ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ	ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ՝ ----------	Հ/Հ 220013336684000	Հ/Հ 220013334374000
Կենտրոնական գանձապետարան	Էլ. Փոստ՝ info@seismshin.am	Էլ. Փոստ՝ info@constructinproject.am
Գործադիր տնօրեն	Հեռ.՝ 011-778-787, 044-77-87-87	Հեռ.՝ 011-787-887, 044-787-887
Սարգիս Բաղինյան	Տնօրեն՝ Ն. Բունիաթյան	Տնօրեն՝ Փ.Սուքիասյան
---------- /ստորագրություն/	---------- /ստորագրություն/	---------- /ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«21» 03 2025թ.. կնքված
«ՀՏՀՀ-ՎՀԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4-2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
Հ/հ	ԳՄԱ ծածկագիր՝ CPV	Անվանումը	չափման միավորը	գինը 1 քմ համար, /ՀՀ դրամ/	Առավելագույն գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը***	մատուցման	
							հասցեն	ժամկետը*
1	71621100/509	տեխնիկական վերլուծության և խորհրդատվության ծառայությունների՝ համաձայն ***Հավելված 1.1***	դրամ	900	54000000	1	ՀՀ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 365 օր
2	71621100/510	տեխնիկական վերլուծության և խորհրդատվության ծառայությունների՝ համաձայն ***Հավելված 1.1***	դրամ	900	54000000	1	ՀՀ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 365 օր
Ֆինանսավորման աղբյուր		ՀՀ պետական բյուջե						
Պատվիրատու		Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ						

** Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է/ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

*** Յուրաքանչյուր չափաբաժնում կներառվեն մինչև 20 առաջադրանք:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ ----------
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն՝
Սարգիս Բաղինյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ
(գործընկեր 1)
Հասցեն՝ ք. Երևան, Գարեգին Նժդեհ 46
ՀՎՀՀ 04227903
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220013336684000
Էլ. Փոստ՝ info@seismshin.am
Հեռ.՝ 011-778-787, 044-77-87-87
Տնօրեն՝ Ն. Բունիաթյան

/ստորագրություն/
Կ.Տ

«ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
(գործընկեր 2)
Հասցեն՝ ք. Երևան Գարեգին Նժդեհ 46
ՀՎՀՀ 04225682
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220013334374000
Էլ. Փոստ՝ info@constructinproject.am
Հեռ.՝ 011-787-887, 044-787-887
Տնօրեն՝ Փ.Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 1.1
«21» 03. 2025թ. կնքված
«ՀՏՀՀ-ՎՀԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4-2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ տարբեր մարզերում մի շարք դպրոցների վերանորոգման համար շենքերի չափագրման, ծավալաթերթ/թերությունների ակտերի և նախահաշիվների փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ

1	**Առաջադրանքի համառոտ նկարագիրը**	ՀՀ կառավարության «ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԸ ԿԱՌՈՒՑՎՈՂ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՂ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ 300 ԴՊՐՈՑՆԵՐ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է Հայաստանի տարբեր մարզերում ընտրել և վերանորոգել մի շարք դպրոցներ: Այդ նպատակով նախատեսվում է նախապես ընտրել համապատասխան որակավորում ունեցող Խորհրդատու կազմակերպություններ, որոնց կհանձնարարվեն վերանորոգման ենթակա դպրոցների տեխնիկական վիճակի ուսումնասիրման, չափագրման, անհրաժեշտության դեպքում՝ էսքիզային նախագծի մշակման և դրանց հիման վրա ծավալաթերթ/թերությունների ակտի և նախահաշվի ու նախահաշիվ-ծավալաթերթի կազմման, հաստատման, համաձայնեցման աշխատանքները: Պատվիրատուն հանձնարարում է Խորհրդատուին կատարելու նախահաշիվը պարզ փորձաքննության ներկայացման աշխատանքները (համաձայն ՀՀ Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման Հավելված N 2-ի 7-րդ կետի) : Բոլոր ընտրված դպրոցներում նախատեսված աշխատանքները, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման, դասակարգվում են որպես ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ I կատեգորիա: Ընտրված դպրոցները կխմբավորվեն ըստ չափաբաժինների: Չափաբաժնի հաղթող ճանաչված կազմակերպությանը յուրաքանչյուր վերանորոգվող դպրոցի համար կտրամադրվեն առանձին, լրացուցիչ առաջադրանքներ, որտեղ նկարագրված կլինեն այդ դպրոցում նախատեսված աշխատանքների նախնական ցանկը: Ընդ որում ցանկացած չափաբաժնի հաղթողին կարող է հանձնարարվել մինչև **20 առաջադրանք,** պայմանագրային ընդհանուր գումարի շրջանակներում : Ընդ որում I-ին փուլի եզրակացության հիման վրա տվյալ դպրոցի հետագա աշխատանքները պատվիրատուի կողմից դադարեցնելու դեպքում, այն չի հաշվառվի և Խորհրդատուին կարող է հանձնարարվել նոր առաջադրանք: Նշված քանակի սահմաններում հանձնարարված ցանկացած առաջադրանք Խորհրդատուն պարտավոր է անվերապահորեն կատարել: **Խորհրդատուի կողմից մատուցվող ծառայությունները բաժանվում են երեք փուլի.** **I փուլ** – Շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն **II փուլ** - Չափագրական աշխատանքներ և նախահաշիվ **III փուլ** - Վերանորոգման աշխատանքների վերահսկում I, II և II փուլի Յուրաքանչյուր դպրոցի աշխատանքների կատարման համար կկնքվեն երկու առանձին համաձայնագրեր՝ I և II փուլերի համար, III փուլ համար:
2	**Մատուցվող ծառայությունների համառոտ բնութագիրը**	**Ստորև ներկայացվում են մատուցվող ծառայությունների ընդհանուր ցանկը, որի հիման վրա յուրաքանչյուր դպրոցի համար կկազմվի առանձին առաջադրանք.** **I փուլ – Շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն** Տեխնիկական վիճակի ուսումնասիրությունը կատարել համաձայն «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումներ»-ում և ՀՀՇՆ-20-06-2014 նշված դիտողագործիքային հետազոտության պահանջների **II փուլ - Չափագրական աշխատանքներ և նախահաշիվ**

		1. Տվյալ դպրոցի առաջադրանքով նախատեսված հատվածների (մասնաշենքերի) հարկերի չափագրում, սենք առ սենք նշելով պատերի, առաստաղների, աստիճանների, ներառյալ ճաղաշարերն ու բազրիկները, և հատակների վնասված հատվածները, փոխարինման կամ վերանորոգման ենթակա դռները, պատուհանները, լուսամուտագոգերը, ջեռուցման սարքերը և խողովակները: Անհրաժեշտ է նշել նաև ամրացման, կամ, առանձին հատվածներում, վերաշարման ենթակա միջնորմերը: 2. Չափագրական գծագրերում նշել լրացման, վերանորոգման կամ փոխարինման ենթակա լուսավորության և էլեկտրամատակարարման սարքերը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել էլեկտրամատակարարման լարերի առանձին հատվածների փոխարինում/վերատեղադրում: **3.** Կտուրի չափագրական գծագրեր, նշելով փոխարինման կամ լրացման ենթակա փայտյա հիմնակամախքի տարրերը, փայտյա հիմնակմախքի հակահրդեհային և հակասեպտիկ քսապատումը, տանիքի ծածկույթի ամբողջական, կամ մասնակի փոխարինվող, կամ վերանորոգվող/ամրացվող հատվածները, ամրացման, լրացման, վերանորոգման ենթակա տանիքի ջրահեռացման խողովակները, ձագարները, ջրհորդանները, թիթեղյա մանր ծածկույթները և այլ տարրերը: Անհրաժեշտության դեպքում տանիքներում նախատեսել ձնարգելներ, իսկ ջրհորդաններում և ջրահեռացման խողովակներում՝ էլեկտրատաքացուցիչ լարեր (ԹԵՀ) 4. Սանհանգույցները ներկայացնել առանձին, մեծ մաշտաբի չափագրական գծագրերով, նշելով ամրացման, լրացման, վերանորոգման կամ փոխարինման ենթակա սարքերը, ջրամատակարարման և ջրահեռացման խողովակները, հոսակները, խցիկների քանդվող և վերարտեղադրվող միջնորմները, վերականգնման ենթակա օդափոխության համակարգի տարրերը: Ընդ որում խցիկների նոր միջնորմները և դռները նախատեսել թեթև, հավաքովի էլեմենտներից: Դպրոցներում, հնարավորության դեպքում, նախատեսել առանձին սանհանգույց շարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար, ըստ գործող նորմերի: 5. Չափագրել ճակատները, նշելով վերականգնման ենթակա գետնախարսխի հատվածները, պատերի և քիվերի առանձին թափված կամ տեղաշարժված քարերը, սվաղված պատերի վերականգնման ենթակա հատվածները, վերականգնման ենթակա արտաքին լուսամուտագոգերը: 6. Չափագրել գլխավոր մուտքին կից մոտեցնող ճանապարհը և հրապարակը և նախատեսել ծածկույթի վերականգնման աշխատանքներ: Չափագրել գլխավոր մուտքի հարթակը, աստիճանները և հովիարը, նշելով վերականգնման ենթակա հատվածները: 7. Հաշվառել անսարք ջեռուցման կաթսաները և վերանորոգման, կարգաբերման, փոխարինման ենթակա կաթսայատան այլ սարքավորումները: 8. Չափագրել և հաշվառել դպրոցի ներտարածքային ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վնասված հատվածները 9. Դպրոցներում, բացակայության դեպքում, նախատեսել հրդեհային ազդարարման համակարգի տեղադրում և կրակմարիչներ, ըստ գործող նորմերի: 10. ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշման <Հավելված 4> -ի <Ցանկ N 1> -ով նախատեսված աշխատանքների

		համար կազմել էսքիզային նախագիծ: Առանձին հանգույցների և դրվակների համար, անհրաժեշտության դեպքում, մշակել սխեմատիկ գծագրեր: 11. Մշակված չափագրական գծագրերի հիման վրա անհրաժեշտ է կազմել վերանորոգման աշխատանքների ծավալաթերթ/թերությունների ակտ, ըստ վերը նշված կետերի, առանձին տողերով ներառելով նաև յուրաքանչյուր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ հարակից աշխատանքների նկարագրությունը և ծավալները (քանդման/ապամոնտաժման աշխատանքներ, շինաղբի բարձու, հեռացում, նախապատրաստական շերտեր և այլն): Ներկայացնել ծավալաթերթում ներառված աշխատանքների իրականացման համար օգտագործվող նյութերի, սարքերի և սարքավորումների մանրամասն նկարագրությունները և մասնագրերը: 12. Կազմել նախահաշիվ, ծավալաթերթ-նախահաշիվ 13. Նախահաշիվը ներկայացնել պարզ փորձաքննության: **<u>III փուլ - Վերանորոգման աշխատանքների վերահսկում</u>** Վերանորոգման աշխատանքների ընթացքում Խորհրդատուն պետք է առնվազն շաբաթը 2 անգամ այցելի շինհրապարակ և վերահսկի կատարվող աշխատանքների որակը, ծավալները և ընթացքը: Խորհրդատուն վերահսկման աշխատանքների ընթացքում պարտավոր է՝ 1. Կազմակերպել շինհրապարակի այցելությունները ըստ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցի՝ ոչ պակաս քան շաբաթը 2 անգամ: 2. Անհրաժեշտության դեպքում, ժամանակացույցից դուրս, այցելել շինհրապարակ ըստ Պատվիրատուի մասնագետների պահանջի: 3. Կատարել անհրաժեշտ խորհրդատվություններ Պատվիրատուի մասնագետներին, կապալառուին շինարարության ընթացքում: 4. Գրավոր տեղեկացնել Պատվիրատուին հայտնաբերված թերությունների և շեղումների մասին, ներառյալ համապատասխանությունը անվտանգության ապահովմանը: 5. Համաձայնեցված լուծումներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում տեղեկացնել Պատվիրատուին և ստանալ նրա համաձայնությունը: 6. Պատվիրատուի և այլ շահագրգիռ կողմերի համաձայնեցմանը ներկայացնել փոփոխված ծավալաթերթերը, կապալառուի պայմանագրային նախահաշվով չնախատեսված աշխատանքների նախահաշվային արժեքները: 7. Ստուգել օգտագործվող նյութերի, և սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և այդ փաստաթղթերում բերված տեխնիկական տվյալների համապատասխանությունը մասնագրերով, նորմերով կամ համապատասխան տեխնիկական փաստաթղթերով նախատեսված պահանջներին: 8. Շինարարության վարման մատյանում նշել նկատողությունները և դիտողությունները հայտնաբերված թերությունները և դրանց վերացման մասին համապատասխան գրառումները, 9. Անավարտ աշխատանքների և թերությունների հայտնաբերման դեպքում կազմել նրանց ցանկը, սահմանել վերացման ժամկետները և անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին: 12. Հետևել, որ կապալառուի կողմից իրականացվող շինարարական աշխատանքները համապատասխանեն անվտանգության նորմերին ու կանոններին: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը 13. Մասնակցել ինժեներական կոմունիկացիաների և կառույցների, խողովակաշարերի, էլեկտրասարքավորումների փորձարկումներին՝ ստորագրելով համապատասխան փորձարկման ակտեր:

		14. Վավերացնել կապալառուի կողմից կազմված և վճարման ներկայացվող կատարողական ակտերը, ծածկված աշխատանքների ակտերը: Խորհրդատուն պատասխանատու է կատարողական ակտում բերված աշխատանքների ծավալների իսկության և որակի համար: 15. Ստորագրել շինարարության ավարտական ակտերը: 16. Վճարման ներկայացվող կատարողական ակտերը, ծածկված աշխատանքների ակտերը և շինարարության ավարտական ակտերը չվավերացնելու դեպքում գրավոր ներկայացնել պատճառները: 17. Պատվիրատուին ներկայացնել ամսեկան հաշվետվություն: 18. Շենքերի և կառույցների կայունությանը և հուսալիությանը սպառնացող թերությունների, ինչպես նաև ծրագրի բնապահպանական և սոցիալական երաշխիքների պահանջների անհամապատասխանության հայտնաբերման դեպքում անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին:
3	**Նորմատիվային պահանջներ**	**Ծառայությունները պետք է կատարվեն ըստ հետևյալ նորմատիվային պահանջների՝** - «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք - «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք, - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20-04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմեր, - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03- «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմեր, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմեր, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի N 253-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմեր, - ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի N 56-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմեր, - ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշում:
4	**Խորհրդատուի կողմից ներկայացվող նյութերի կազմը**	**Փաթեթի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր** **I փուլ – Շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն** Եզրակացություն շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ, ներառյալ լուսանկարները: **II փուլ -** Չափագրական աշխատանքներ և նախահաշիվ ***Մաս 1*** 1. Ընդհանուր բացատրագիր

		2. Հարկերի, տանիքների ճակատների չափագրական գծագրեր, ներառյալ նախատեսվող աշխատանքների մասնագրերը և ծավալները 3. Էսքիզային նախագծեր (ըստ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման) ***<u>Մաս 2</u>*** 1. Ընդհանուր ծավալաթերթ (թերությունների ակտ) 2. Ծավալաթերթում ներառված աշխատանքների իրականացման համար օգտագործվող նյութերի, սարքերի և սարքավորումների մանրամասն նկարագրություններըև մասնագրերը ***<u>Մաս 3</u>*** 1. Նախատեսվող աշխատանքների նախահաշիվ, 2. ծավալաթերթ-նախահաշիվ
5	**Այլ պահանջներ**	**Փորձաքննություններ.** Որպես ցածր ռիսկայնության աստիճանի **(I կատեգորիա)** դասակարգում ունեցող աշխատանքներում Խորհրդատուն պետք է քաղաքաշինական պարզ փորձաքննության ներկայացնի միայն նախահաշիվը: **Համաձայնեցումներ** Աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում Խորհրդատուն պետք է համագործակցի Պատվիրատուի հետ և հաշվի առնի վերջինիս կողմից ներկայացված բոլոր դիտողությունները և առաջարկությունները: Վերջնական ծավալաթերթը (թերությունների ակտը) պետք է համաձայնեցվի դպրոցի տնօրինության և համայնքի ղեկավարի հետ: Անհրաժեշտության դեպքում վերջնական ծավալաթերթը (թերությունների ակտը) և էսքիզային նախագծերը պետք է համաձայնեցվեն նաև օրենքով սահմանված այլ իրավասու մարմինների հետ:
6	**Խորհրդատուի հաշվետվությունները և աշխատանքների ընդունման կարգը**	**<u>I և II փուլ</u>** Փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, լուսանկարներ և այլն/ ամբողջական փաթեթի ներկայացում 4 օրինակ՝ թղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ 2 օրինակ EXCEL տարբերակներով: Բոլոր նյութերը ներկայացնել երկլեզու՝ հայերեն և ռուսերեն: Այս փուլերիի աշխատանքները կհամարվեն ավարտված և կընդունվեն Պատվիրատուի կողմից միայն բոլոր համաձայնեցումների և նախահաշվի վերաբերյալ պարզ փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում: **<u>III փուլ</u>** 1. Ծրագրի շինարարության ընթացքում, յուրաքանչյուր ամսվա կատարողականի հետ, Խորհրդատուն պետք է ներկայացնի Պատվիրատուին ընթացիկ գրավոր հաշվետվություն, որտեղ պետք է ներառված լինեն հաշվետու ժամանակահատվածում իր կողմից կատարված այցելությունները, աշխատանքները, լուսանկարներ, ծածկված աշխատանքների ակտեր, չափագրական նյութեր և այլն: 2. <u>III փուլի աշխատանքների դիմաց Պատվիրատուի կողմից վարձատրումը կկատարվի ամսական վճարումների տեսքով, այդ ամիս կատարված շինարարական աշխատանքների տոկոսին համարժեք տոկոսով</u> 3. Այս փուլի աշխատանքները կհամարվեն ավարտված և վերջին վճարումը կիրականացվի Պատվիրատուի կողմից շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումից հետո, 5 օրվա ընթացքում:
7	**Ծառայությունների կատարման ժամկետը**	**<u>I և II փուլ</u>** Աշխատանքների կատարման ընդհանուր ժամանակահատվածը նախատեվում է **365 օրացուցային օր,** պայմանագիրն (համաձայնագիրն)

		ուժի մեջ մտնելու օրվանից: Բոլոր առաջադրանքները Խորհրդատուին կհանձնարարվեն և պետք է ավարտվեն այդ ժամանակահատվածում: Յուրաքանչյուր դպրոցի համար կնախատեսվի առանձին կատարման ժամկետ, ելնելով աշխատանքների ծավալից, բայց ոչ ավել քան **60 օրացուցային օր:** **<u>III փուլ - Վերանորոգման աշխատանքների վերահսկում</u>** Այս փուլի աշխատանքները, յուրաքանչյուր դպրոցի համար, կմեկնարկեն շինարարական աշխատանքների մեկնարկի օրից և կշարունակվեն մինչև այդ դպրոցի շինարարական աշխատանքների ավարտը:
	Տանիքի կամ ճակատների չափագրման անհրաժեշտության դեպքում, այդ չափագրվող մակերեսները կգումարվի չափագրվող հարկերի հատակների մակերեսին: Գլխավոր մուտքի հարթակի, նրան հարող հատվածի և սալվածքների մակերեսները, ինչպես նաև կաթսայատան կարգաբերման ու առանձին տարրերի, սարքերի ու սարքավորումների և այլ հարակից աշխատանքների հետ կապված ծախսերը առանձին չեն հաշվարկվի և չեն գումարվի: Այդ աշխատանքների համար անհրաժեշտ գումարները պետք է հաշվառված լինեն 1 քմ-ի բերված արժեքում: Յուրաքանչյուր հանձնարարվող դպրոցի II փուլի արժեքը կհաշվարկվի որպես այդ դպրոցի առաջադրանքով նախատեսված վերը նշված չափագրվող մակերեսների հանրագումարի և 1 քմ բերված արժեքի արտադրյալ: III փուլի աշխատանքների արժեքը յուրաքանչյուր դպրոցի համար կհաշվարկվի II փուլում ներկայացված, պարզ փորձաքննության դրական եզրակացության արժանացած և Պատվիրատուի կողմից ընդունված վերանորոգման աշխատանքների նախահաշվային արժեքի 2.0% տոկոսի չափով, ներառյալ ԱԱՀ-ն:	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ ----------
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Սարգիս Բաղինյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ
(գործընկեր 1)
Հասցեն՝ ք. Երևան, Գարեգին Նժդեհ 46
ՀՎՀՀ 04227903
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220013336684000
Էլ. Փոստ՝ info@seismshin.am
Հեռ.՝ 011-778-787, 044-77-87-87
Տնօրեն՝ Ն. Բունիաթյան

/ստորագրություն/

Կ.Տ

«ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
(գործընկեր 2)
Հասցեն՝ ք. Երևան Գարեգին Նժդեհ 46
ՀՎՀՀ 04225682
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220013334374000
Էլ. Փոստ՝ info@constructinproject.am
Հեռ.՝ 011-787-887, 044-787-887
Տնօրեն՝ Փ.Սուքիասյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«21» 03. 2025թ. կնքված
«ՀՏՀՀ-ԿՀԱՓ-ԽԲՄ-ԾՀԲ-2024/4-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71621100/509	տեխնիկական վերլուծության և խորհրդատվության ծառայություններ	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %
2	71621100/510	տեխնիկական վերլուծության և խորհրդատվության ծառայություններ	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %

** Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ ----------
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Սարգիս Բաղինյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ
(գործընկեր 1)
Հասցեն՝ ք. Երևան, Գարեգին Նժդեհ 46
ՀՎՀՀ 04227903
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220013336684000
Էլ. Փոստ՝ info@seismshin.am
Հեռ.՝ 011-778-787, 044-77-87-87
Տնօրեն՝ Ն. Բունիաթյան

/ստորագրություն/
Կ.Տ

«ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
(գործընկեր 2)
Հասցեն՝ ք. Երևան Գարեգին Նժդեհ 46
ՀՎՀՀ 04225682
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220013334374000
Էլ. Փոստ՝ info@constructinproject.am
Հեռ.՝ 011-787-887, 044-787-887
Տնօրեն՝ Փ.Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
« 21 » 03. 2025թ. կնքված
«ՀՏՀՀ-ՎՀԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4-2» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«21» 03 -2025թ. կնքված
«ՀՏՀՀ-ՎՀԱՓ-ԽԲՄ-ԾՀԲ-2024/4-2» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն